

Արձանագրություն №5/2019-2020

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2019թ. հոկտեմբերի 3-ին տեղի ունեցած թիվ 5 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 71-ը (յոթանասունմեկը):
Նիստը նախագահում էր ռեկտորի ժ/պ Գ. Գ. Գևորգյանը:

Ռեկտորի ժ/պ Գ. Գ. Գևորգյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. Բարձրագույն կրթության և գիտության մասին ՀՀ օրենքի նախագծի քննարկում (զեկ.՝ ռեկտորի ժ/պ Գ. Գ. Գևորգյան):
2. 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատման մասին (զեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Հ.Գ. Ժամհարյան)
3. ԵՊՀ գիտական խորհրդի 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում (զեկ.՝ գիտքարտուղար Լ.Ս. Հովսեփյան):
4. ԵՊՀ բակալավրի նոր կրթական ծրագրերի հաստատում (զեկ.՝ գիտական խորհրդի որակի ապահովման հանձնաժողովի նախագահ Է.Ս. Գևորգյան)
5. ԵՊՀ գիտական խորհրդի հանձնաժողովներում փոփոխություններ կատարելու մասին (զեկ.՝ գիտքարտուղար Լ. Ս. Հովսեփյան):
6. Հաղորդում ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգի կիրարկման մասին» (զեկ.՝ որակի ապահովման կենտրոնի տնօրեն Ա.Ս. Բուդաղյան)

Ընթացիկ հարցեր

- 6.1. Գերմանիայի Դաշնային Հանրապետության Զիգենի համալսարանի հարիլիտացված դոկտոր Սուրեն Գրիգորյանին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու մասին (զեկ.՝ ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ.Ս. Հակոբյան):
- 6.2. ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. Արամ Հովհաննիսյանի՝ «Հայոց եկեղեցին կիլիկյան շրջանում» աշխատանքը որպես բուհական դասագիրք հաստատելու համար ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:
- 6.3. Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կանոնադրության հավելվածում փոփոխություններ կատարելու մասին:

Օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգը հաստատելուց հետո ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանն առաջարկեց օրակարգի առաջին հարցը՝ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկումն անցկացնել օրակարգի մյուս հարցերի ավարտից հետո:

1. Լսեցին. - 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատման մասին:

Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը գիտխորհրդի հաստատմանը ներկայացրեց 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատման մասին հարցը: Նա փաստեց, որ ֆակուլտետներից ստացված փաստաթղթերի հիման վրա ամփոփվել է այս տարվա անվանական կրթաթոշակների թեկնածուների ցանկը. 54 անվանական կրթաթոշակների համար ներկայացվել է 57 թեկնածու, որից 35-ը նոր հավակնորդներ են և բոլոր փաստաթղթերը համապատասխանում են կարգով սահմանված պահանջներին:

Որոշեցին.- հաստատել 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը:

2. Լսեցին.- գիտական խորհրդի 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատման մասին: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ ներառված հարցերը պլանային են, ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել, ներառվել նորերը: Հավանաբար նոյեմբերին կքննարկվի լրավճարների կարգում փոփոխությունների հարցը և առաջարկների դեպքում դրանք կարող են ներկայացվել պրոռեկտորներին:

Որոշեցին.- հաստատել գիտական խորհրդի 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցը:

3. Լսեցին.- ԵՂՀ բակալավրի նոր կրթական ծրագրերի հաստատման մասին:

Գիտական խորհրդի որակի ապահովման հանձնաժողովի նախագահ Է. Գևորգյանը նշեց, որ նոր ծրագրերի հաստատման հարցը լսվել և քննարկվել է հանձնաժողովի նիստի ընթացքում, անցել համապատասխան ընթացակարգերը: Ըստ նրա՝ ներկայացվել է բակալավրիատի կրթական 4 նոր ծրագիր երկու ֆակուլտետների կողմից: Միջազգային հարաբերությունների ֆակուլտետը ներկայացվել է «Հանրային քաղաքականություն և հանրային մենեջմենթ», իսկ Ֆիզիկայի ֆակուլտետը՝ «Տվյալների մշակումը ֆիզիկայում և արհեստական բանականություն», «Նանոֆիզիկա և առաջատար տեխնոլոգիաներ» և «Երկակի նշանակության տեխնոլոգիական ֆիզիկա» ծրագրերը: Ռեկտորի ժ/պ Գևորգյանը նկատեց, որ ֆիզիկայի ֆակուլտետի կողմից 3 նոր ծրագրերի ներկայացումը բավական հին պատմություն ունի և առաջարկ է արվել սահմանափակվել 1 նոր ծրագրով: Նա հայտարարեց, որ եթե ուսանողների թերի թվաքանակ հավաքվի այդ նոր ծրագրերում, ապա վարձատրությունը լինելու է դրան համարժեք:

Որոշեցին.- Հաստատել ԵՂՀ բակալավրի նոր կրթական ծրագրերը:

4. Լսեցին. – ԵՊՀ գիտական խորհրդի հանձնաժողովների կազմում փոփոխություններ կատարելու մասին հարցը: Գիտքարտուղար Լևոն Հովսեփյանը նշեց, որ փոփոխություններ նախատեսվում են երեք հանձնաժողովներում՝ իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության, մրցութային և որակի ապահովման: Որակի ապահովման հանձնաժողովի կազմում սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանող Էլինա Արիստակեսյանը փոխարինել է Ժենյա Թոթոյանին, քանի որ վերջինս ավարտել է ուսումը: Նույն հանգամանքով պայմանավորված՝ բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի անդամ Հովհաննես Ադոնցին կփոխարինի ռադիոֆիզիկայի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Նարեկ Մարգարյանը: Իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության կազմում էլ տեղի են ունեցել փոփոխություններ՝ կապված պրոռեկտորների փոփոխության հետ: Նախկին պրոռեկտորներ Մենուա Սողոմոնյանի, Արսեն Բաբաջանյանի և Ռուբեն Մարկոսյանի փոխարեն հանձնաժողովի կազմում ընդգրկվել են Էլինա Ասրիյանը, Ռաֆայել Բարխուդարյանը, Արթուր Իսրայելյանը:

Որոշեցին – հաստատել ԵՊՀ գիտական խորհրդի հանձնաժողովների կազմում առաջարկվող փոփոխությունները:

5. Լսեցին. - Հաղորդում ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կիրարկման մասին: Որակի ապահովման կենտրոնի տնօրեն Ա. Բուդաղյանը հաղորդեց ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգի կիրարկման մասին՝ նշելով, որ մշտադիտարկման ներդրումը կարևոր է կրթական ծրագրերի որակի, դրանց մատուցման արդյունավետության և շարունակական բարելավման տեսանկյունից: Այն դառնալու է ներքին կարևոր մեխանիզմներից մեկը, որը պարտադիր պայման է պետական հավատարմագրման համար: Ըստ նրա՝ 2021թ. փետրվարին ավարտվում է ինստիտուցիոնալ հավատարմագրման ժամկետը և պետք է պատրաստվել նոր հավատարմագրմանը, ինչը երկարատև և փուլային գործընթաց է: Ա. Բուդաղյանը նշեց, որ թեև մոնիթորինգի և վերանայման կարգը հաստատվել է դեռևս 2014թ., այդուհանդերձ այն նոր է կիրառվում, որովհետև մագիստրոսի կրթական ծրագրերը, որոնք նորովի են մշակվել, նախորդ տարի են ավարտվել, մեկ շրջափուլ արդեն իսկ տեղի է ունեցել և պետք է արդյունավետության տեսանկյունից գնահատվեն: Ֆակուլտետները իրենք են կազմակերպում, իրականացնում իրենց ծրագրերի մոնիթորինգը՝ որպես ինքնավերլուծության գործընթաց: Նախաձեռնվել են նաև մոնիթորինգի շրջանակում համապատասխան ֆոկուսային խմբերի հետազոտություններ ուսանողների նվազագույն թվով ներգրավվածություն ունեցող մագիստրոսական ծրագրերում: Դրա արդյունքում կկազմվեն զեկույցներ և կտրամադրվեն մոնիթորինգի իրականացման խմբերին: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը կոչ արեց բոլորին գործընթացին ավելի լուրջ մոտենալ, ուսանողներին էլ հորդորեց ավելի պահանջատեր լինել և հանդես գալ առաջարկություններով ու անաչառ վերլուծություններով՝ նկատելով, որ 2021թ. հավատարմագիր ունենալու հարցը կախված է մոնիթորինգի իրականացման քրտնաջան

աշխատանքից ու արդյունքներից: Հավատարմագրման հետ կապված ավելի խիստ մոտեցումներ են լինելու, քան նախկինում էր:

Որոշեցին. - ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կիրարկման մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

6. **Լսեցին.** - Գերմանիայի Դաշնային Հանրապետության Զիգենի համալսարանի հաբիլիտացված դոկտոր Սուրեն Գրիգորյանին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու մասին հարցը: Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Հակոբյանը ներկայացրեց Ս. Գրիգորյանի գիտական գործունեությունն ու նպաստը Հայաստանում և ԵՊՀ-ում ֆիզիկայի զարգացման հարցում՝ ընդգծելով վերջինիս արժանի լինելը ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչմանը:

Որոշեցին. - Զիգենի համալսարանի հաբիլիտացված դոկտոր Սուրեն Գրիգորյանին շնորհել ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

7. **Լսեցին.** - ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի դոցենտ Արամ Հովհաննիսյանի՝ «Հայոց եկեղեցին կիլիկյան շրջանում» աշխատանքը որպես բուհական դասագիրք հաստատելու համար ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

Արտահայտվեցին. - ԻԿՄ ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանը նշեց, որ նման դասագրքերը անպայման պետք է հասանելի լինեն էլեկտրոնային գրադարանում, ինչին համակարծիք եղավ նաև ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը: Ի պատասխան Ա. Հովհաննիսյանը փաստեց, որ այն արդեն իսկ առկա է էլեկտրոնային բազայում:

Որոշեցին. - ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի դոցենտ Ա. Հովհաննիսյանի՝ «Հայոց եկեղեցին կիլիկյան շրջանում» աշխատանքը որպես բուհական դասագիրք հաստատելու համար միջնորդել ԿԳՄՄՆ-ին:

8. **Լսեցին.** - Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կանոնադրության հավելվածում փոփոխություններ կատարելու մասին: Գ. Գևորգյանը նշեց, որ ֆակուլտետում կատարված կառուցվածքային փոփոխություններով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարել ֆակուլտետի կանոնադրության հավելվածում՝ ներկայացնելով ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների փաստացի ցանկը:

Որոշեցին. - հաստատել տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կանոնադրության հավելվածում փոփոխությունները:

9. **Լսեցին.** - Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանի առաջարկությամբ գիտխորհուրդը քննարկեց ԿԳՄՄՆ-ի առաջարկված փոփոխությունները՝ կապված հաջորդ տարվա ընդունելության մասնագիտությունների քննությունների հետ: Ռուս բանասիրության ֆակուլտետում անցած տարվանից ներդրվել է «Միջմշակութային հաղորդակցություն և թարգմանություն» կրթական ծրագիրը՝ ռուսերեն գրավոր և ռուսերեն բանավոր կամ անգլերեն գրավոր քննություններով և հայոց լեզու՝ դպրոցի գնահատականով: Նախարարությունից պնդում են, թե եթե կա թարգմանություն հասկացությունը, ապա հայոց լեզվի պարագայում իրավունք չկա

դպրոցի գնահատական ընդունել: Բացի այդ, մաթեմատիկայի և մեխանիկայի և ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետներում ընդունելությունը կազմակերպվում էր հետևյալ կերպ մաթեմատիկայի միասնական քննություն, ֆիզիկա (գրավոր) կամ անգլերեն (գրավոր): Նախարարությունից առաջարկում են, որ պետք է հանել անգլերենը, իսկ այսօր դիմորդների մեծ մասը պարապում է մաթեմատիկա և անգլերեն, քանի որ այդ առարկաների իմացության դեպքում բուհերի ընտրության շրջանակը մեծանում է, այդ թվում՝ արտասահմանյան և ի հայտ են գալիս անհավասար մրցակցության պայմաններ:

Որոշեցին. - միասնական առաջարկությամբ հանդես գալ և հորդորել ԿԳՄՄՆ-ին երեք ֆակուլտետների՝ ռուս բանասիրության, մաթեմատիկա և մեխանիկայի, ինֆորմատիկայի ու կիրառական մաթեմատիկայի ընդունելությունը կազմակերպել նախկինում սահմանված քննություններով՝ հայոց լեզուն դպրոցական գնահատակով, մաթեմատիկա և անգլերեն կամ ֆիզիկա (ըստ ընտրության):

10. **Լսեցին.** - «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի մասին հարցը: Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը մինչ բուն քննարկմանն անցնելը հայտարարեց, որ նախագծի հետ կապված բոլոր առաջարկությունները կհամակարգվեն և կներկայացվեն հոկտեմբերի 5-ին տեղի ունենալիք ռեկտորների խորհրդի նիստին: Ոչ միայն գիտխորհրդի միասնական կարծիքն է ներկայացվելու, այլև անհատների առաջարկները: Նա նշեց, որ օրենք գրելուց առաջ պետք է քննարկել հիմնական սկզբունքները, այսինքն՝ համաձայնության գալ ընդհանուր հայեցակարգի շուրջ, այնուհետև հանձնարարել մասնագետների խմբին, որոնք պրոֆեսիոնալ ձևով օրենք կգրեն: Դրանից հետո էլ կարող են քննարկումներ և առաջարկներ լինել, բայց դրանք արդեն թեթև խմբագրական, կոսմետիկ բնույթ կունենան: Օրենքի այս նախագիծն արդեն երրորդ տարին է շրջանառվում, դրույթներ կան, որ ներառվում են, հետո հանվում: Պարզ չէ, թե որ պահին պիտի ամրագրվի, որ ընդունելի լինի գիտակրթական հանրության համար: Միակ հիմնարար նոր դրույթը, որ այսօր առկա այս նախագծում, գիտության ներառումն է: Գ. Գևորգյանը մտահոգություն հայտնեց հատկապես նախագծում ԳԱԱ-ի դերի գրեթե զրոյական մոտեցման հարցում՝ նկատելով, որ դրանում կա անընդունելի դրույթ և այդ հարցում կկազմակերպվի առանձին քննարկում:

Նախագծի վերաբերյալ առաջին նկատառումը վերաբերում էր օրենքի նախագծի գլուխ 1-ի այն դրույթին, ըստ որի՝ անցում է կատարվում գիտական մեկ աստիճանի համակարգին: Գ. Գևորգյանը առաջարկեց նախագծում ներդնել դոկտորի գիտական աստիճանը, որը տրվում է գիտակրթական ծրագրերի իրականացման և դոկտորական ատենախոսության պաշտպանության արդյունքում: Աստիճանների գիտական չափորոշիչների համապատասխանությունը լրացուցիչ պետք է որոշվի: Որպես հիմնավորում՝ նա փաստեց, որ այն պնդումը, թե արևմտյան բոլոր երկրներում գործում է մեկ աստիճան, սխալ է: Գրեթե բոլոր երկրներում կա երկրորդ գիտական աստիճանը: Չկա ԱՄՆ-ում, բայց դրա փոխարեն այնտեղ կա լուրջ ֆինանսավորում: Այսինքն՝ տարբերակում են՝ ըստ ստացած գումարի: Բացի դրանից՝ շատ երիտասարդներ այս կամ այն կերպ պաշտպանել են թեկնածուական ատենախոսությունը, և կան երիտասարդներ,

որոնք հաջողությամբ պաշտպանել են այն և նույնիսկ՝ դոկտորական ատենախոսությունը: Նրանց բոլորին մեկ հարթության մեջ դիտարկելը սխալ է:

Հաջորդ դիտարկումը վերաբերում էր օրենքի նախագծի այն դրույթին, որով բուհի համար պարտադիր են ինստիտուցիոնալ ու ծրագրային հավատարմագրման գործընթացները. Գ. Գևորգյանը նշեց, որ ծրագրային հավատարմագրման պարտադիր լինելու պարագայում, այն ֆինանսական լուրջ բեռ կդառնա համալսարանի համար, քանի որ կան 50-ից ավելի բակալավրիատի և 120-ից ավելի մագիստրոսական ծրագրեր: Այն պահանջելու է նաև աշխատանքային լուրջ ռեսուրս: **Առաջարկվեց** ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը սահմանել պարտադիր, իսկ ծրագրային հավատարմագրումը՝ կամավոր:

Գ. Գևորգյանն **առաջարկեց** ավելացնել, որ բուհը ինքնուրույն է որոշում, հաստատում նաև բոլոր տարակարգերի աշխատավարձերը, հաստիքացուցակը, վարձավճարների չափը, ընդ որում՝ առանց վերևից արվող սահմանափակման, քանի որ այսօր օրենքով վարձավճարի չափը սահմանափակված է վերևից: Եթե լինել ներքևից, գուցե հասկանալի լիներ այն իմաստով, որ կասկածի տեղիք տար տրամադրվող կրթության որակը: Սակայն վերևից սահմանափակումը սխալ է, մանավանդ որ բոլոր բուհերը չեն ենթարկվում դրան:

Առաջարկվեց նախագծից հանել ընդհանրապես հաշվետվությունների կարգը: Գ. Գևորգյանը նկատեց, որ չափազանց շատ են դրույթները, որոնք պետք է ամրագրված չլինեն օրենքով: Հաշվետվությունների վերաբերյալ դրույթները պետք է կարգավորվեն կամ Կառավարության, կամ նախարարության որոշումներով:

Հաջորդ **առաջարկը** վերաբերում էր նախագծի հոդված 10-ի 15-րդ կետին, ըստ որի՝ մասնակի բեռնվածությամբ ուսումնառող ուսանողի ուսումնառության ընդհանուր տևողությունը բակալավրի համար առավելագույնը 8, իսկ մագիստրոսի համար՝ 4 ուսումնական տարի է: Եթե ուսանողն ընդունվել է պայմանով, որ պետք է սովորի 8 տարի, իսկ այդ ընթացքում 4 տարվա ուսումնական ծրագրում եղել է փոփոխություն, ապա ինչպե՞ս պետք է նա ավարտի: Հնարավոր է՝ նրան ստիպեն հանձնել բոլոր փոփոխությունները: Գ. Գևորգյանը նշեց, որ **առկա է անորոշություն և պետք է մեխանիզմները հստակ լինեն**:

18-րդ հոդվածի 10-րդ կետի մասով առաջարկվեց բուհի կողմից ընդունելության մրցույթի կարգի և չափանիշների հաստատման և հրապարակման հետ միասին **ամրագրել նաև մրցույթի անցկացման, իրականացման** մասին ձևակերպումը:

19-րդ հոդվածի 2-րդ կետի մասով **առաջարկվեց հանել** այն, քանի որ կամավոր հիմունքներով դասախոսների և գիտաշխատողների կողմից հասարակական միավորումներ, ներառյալ՝ ակադեմիական, գիտական, գիտատեխնիկական ընկերություններ, միություններ ստեղծելու հարցում դրվում են սահմանափակումներ, որոնք խախտում են մարդու սահմադրական իրավունքները: Ըստ էության դրույթի վերջին ձևակերպումը հակասահմանադրական է:

22-րդ հոդվածի վերաբերյալ **առաջարկվեց սահմանել** բուհերի տեսակները՝ համալսարան, ինստիտուտ, կոնսերվատորիա, ակադեմիա, ճեմարան և այլն: Ներկայացված նախագծով սահմանված է միայն համալսարանը:

23-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի վերաբերյալ էլ **առաջարկվեց** «ակադեմիական խորհուրդը» փոխարինել «գիտական խորհրդով»:

30-րդ հոդվածի 4-րդ կետի վերաբերյալ **առաջարկվեց**, որ ակադեմիական խորհրդի (գիտական խորհրդի) նախագահ պետք է լինի ռեկտորը: Գ. Գևորգյանը նշեց, որ ըստ նախագծի ստացվում է, որ յուրաքանչյուր ոք կարող է լինել խորհրդի նախագահ՝ բացի ռեկտորից, պրոռեկտորներից, վարչական աշխատողներից, ինչը ոչ մի լավ բան չի տա բուհին: Այդ կետով սահմանվում է, որ բուհի ռեկտորը և բուհում վարչական պաշտոն զբաղեցնող (կամ ռեկտորի կողմից ակադեմիական խորհրդում նշանակված) անձը չեն կարող ընտրվել ակադեմիական խորհրդի նախագահ:

Նույն հոդվածի 7-րդ կետի մասով նշվեց, որ առկա ձևակերպումն ուղղակի **աբսուրդային** է և առաջարկվեց ընդհանրապես հանել այդ դրույթը: Սահմանվում է, որ Ակադեմիական խորհրդի որոշման վրա բուհի ռեկտորն ունի արգելք դնելու իրավունք, եթե այն հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և բուհի կանոնադրությանը: Մեկամսյա ժամկետում նույն որոշումն ակադեմիական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընդունվելու դեպքում, այն համարվում է ակադեմիական խորհրդի կողմից ընդունված և պարտադիր բուհի ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների համար:

31-րդ հոդվածի 2-րդ կետի առնչությամբ նշվեց, որ այն վերափոխման կարիք ունի, թե ինչ է ստաժը կամ փորձը: Ի պատասխան ներկայացված նախագծում բուհի ռեկտորի ընտրության համար առաջադրվող պահանջների մասին գիտխորհրդի անդամների հարցադրմանը՝ Գ. Գևորգյանը նկատեց, որ համալսարանի ռեկտորի պարագայում 5 տարվա աշխատանքային փորձը էականորեն քիչ է և ոչ բավարար: Քանի որ բուհերն իրենց բնույթով տարբեր են, ապա ռեկտորին ներկայացվող պահանջները կարող են տարբեր լինել՝ առաջարկելով այդ դրույթի ամրագրումը թողնել կոնկրետ բուհերի կանոնադրություններին: Նա նշեց, որ այդ հարցում նախագծում առկա դրույթն **անընդունելի** է, ուստի այն պետք է թողնվի բուհի կանոնադրային սահմանմանը:

Նախագծի 31-րդ հոդվածի 8-րդ կետի մասով նշվեց, որ **անընդունելի** է ռեկտորի կողմից ղեկանների նշանակման դրույթը, քանի որ մեծ բուհերում մեծաթիվ ֆակուլտետների առկայության պարագայում ղեկանների ուղղակի նշանակումը ճիշտ չէ: Առաջարկվեց ղեկանների և ամբիոնի վարիչների՝ ֆակուլտետների կողմից ընտրվելու դրույթի ամրագրումը:

Նախագծի 34-րդ հոդվածի 3-րդ կետի վերաբերյալ **անընդունելի** համարվեց «արժեք փողի դիմաց» գնահատականի մասին դրույթը, քանի որ կան մասնագիտություններ, որոնց վրա կատարվող ծախսն ավելին է, քան համալսարանն ստանում է պետությունից կամ ուսանողներից, ինչպես օրինակ՝ երկրաբանության, կենսաբանության, ֆիզիկայի պարագայում: Հայագիտությունը օրենքով հռչակված է որպես գերակա ուղղություն և եթե հայ բանասիրության ֆակուլտետն, այսպես ասած,

վնասով է աշխատում, դա չի նշանակում որ այն կարելի է փակել, ուստի «արժեք փողի դիմաց» սահմանումը սխալ է և ավելորդ»:

35-րդ հոդվածի 8-րդ կետը համարվեց **գովելի**, այն առումով, որ ամրակցված տարածքների վարձակալությունից ստացված վճարները համարվում են բուհի սեփականություն:

Նախագծի 36-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ բուհերը կարող են սահմանել կրթական ծառայություններ մատուցելու համար ըստ կրթական ծրագրերի ուսման վարձի չափը և պետական բյուջեից ֆինանսավորում ստացող բուհերը պարտավոր են լիազոր պետական մարմին ներկայացնել կրթական ծրագրերի ուսման վարձի մեծության հաշվարկը: Գ. Գևորգյանը նշեց, որ շուկայական պայմաններում գործում է վարձի չափի որոշման մեկ՝ «առաջարկ-պահանջարկի» կանոնը, և համալսարանը պետք է հաշվարկի վարձավճարի չափը՝ **անընդունելի** համարելով հաշվետվություն տալու վերաբերյալ դրույթը:

37-րդ հոդվածում բաց է մնացել ուսանողական գիտական ընկերության հարցը, այն տարալուծվել է ուսանողական խորհրդի մեջ, դրանք երկու կարևոր, բայց տարբեր կառույցներ են և ճիշտ չէ դրանք միավորել, **պետք է լինեն տարանջատված**:

38.10-րդ հոդվածի մասով ևս առաջարկվեց, որ **դեկանների պաշտոնները պետք է ևս լինեն ընտրովի պաշտոնների ցանկում**:

Նույն հոդվածի 13-րդ կետով սահմանվում է, որ բուհում ակադեմիական կազմի թափուր պաշտոնների տեղակալումն իրականացվում է բաց մրցութային կարգով՝ 5 տարի ժամկետով: Գ. Գևորգյանը նկատեց, որ **ճիշտ կլինի առաջին անգամ սահմանել մինչև 5 տարի**, քանի որ լինում են դեպքեր, երբ դասախոսական հմտությունների տեսանկյունից անհայտ մարդիկ են շահում մրցույթը, և նրանց հետ միանգամից 5 տարի ժամկետով պայմանագիր կնքելը ճիշտ չէ: Մինչև հիմա կիրառվել է դեկանների և ամբիոնի վարիչների դրական հիմքով զեկուցագրերի հիման վրա պայմանագրի շարունակման պրակտիկան: Որոշվեց առաջարկել ակադեմիական կազմի թափուր պաշտոնների տեղակալումն առաջին անգամ սահմանել **մինչև 5 տարի** ժամկետով:

Նա անդրադարձավ նաև 38-րդ հոդվածի 15-րդ կետին, ինչը սահմանում է՝ բուհում (մասնաճյուղում) վարչական պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում վարչական կամ գիտական ստորաբաժանման (ամբիոն) ղեկավարի պաշտոնում նշանակված (ընտրված) անձի լիազորությունները դադարեցվում են ռեկտորի որոշմամբ, եթե լրացել է նրա տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը: Այսինքն՝ եթե լրանում է ամբիոնի վարիչի 65 տարեկանը, ապա նա պետք է դուրս գա: Եթե այդ մոտեցումն ընդունելի է ռեկտորի կամ դեկանների պարագայում, ապա ամբիոնի վարիչի դեպքում լրիվ **անընդունելի** է՝ հատկապես որ այն վարչական պաշտոն չէ: Ընդունելի է պաշտոնների ռոտացիոն համակարգը:

39-րդ-ի 1-ին կետի մասով առաջարկվեց գիտական կոչման համար լրավճարի տրամադրումը կատարել **կենսաթոշակային տարիքից՝ 70-ից** նվազեցնելով 65:

26-րդ հոդվածի մասով Գ. Գևորգյանը նկատեց, որ օրենքի նախագծի ամենավիճահարույց հոդվածն է, որով սահմանվում է հանրային բուհի կառավարման

խորհրդի ձևավորումը: Ըստ նրա՝ նախ վիճելի է, թե ինչն է տարբերություն դրվում ուսանող անդամի և ոչ ուսանող անդամի միջև. հատուկ շեշտվում է, թե ուսանողության ներկայացուցիչը երկու անգամ անընդմեջ չի կարող նշանակվել նույն բուհի կառավարման խորհրդի անդամ: Պետք է դա հստակ բոլորի համար գրել: Նրա մոտեցմամբ՝ այդ հոդվածը, ըստ էության, բուհի գործառույթներում վերահսկիչ փաթեթ ունենալու մասին է: Անխտիր բոլոր հիմնարկներում հիմնադիրն ունենում է վերահսկիչ փաթեթ: Այստեղ ևս դա իրագործելու համար, իր կարծիքով, որոշակի սխալ ձևով է իրականացվում: Ըստ էության՝ վերահսկիչ փաթեթը ռեկտոր ընտրելու համար է: Կարելի է փաստել, որ համալսարանի 100 տարվա ընթացքում երբևէ ռեկտոր չի ընտրվել: Եթե կա հիմնադիր մարմին, ապա նա էլ պետք է նշանակի, ինչն, ընդհանուր առմամբ, նաև բնական է: Գ. Գևորգյանի կարծիքով՝ բոլոր ռեկտորներն առաջին հերթին պետք է կայանան համալսարանական միջավայրում, որպեսզի կարողանան համալսարանն առաջ տանել. «Ես չեմ պատկերացնում մի ռեկտոր, ով պիտի գա, և համալսարանի ընդհանրական կամքին հակառակ կարողանա ինչ-որ բան անել: Դրա համար **առաջարկում եմ ռեկտորին նշանակել**, բայց նա հաշվետու լինի խորհրդի առաջ»: Անդրադառնալով նախագծով առաջարկվող հոգաբարձուների խորհրդի կազմին՝ Գ. Գևորգյանն ասաց, որ այն պետք է բաղկացած լինի ոչ միայն ՈւԽ, այլև ՈԻԳԸ 1-ական անդամներից, դասախոսական կազմը պետք է ներկայացված լինի 4 անդամով (1/3-ով), իսկ կազմի մնացած մասը, որը պետք է նշանակի նախարարը, պետք է բաղկացած լինի գործատուներից և համալսարանի նախկին վարչական աշխատակիցներից, քանի որ սխալ կլինի անտեսել վերջիններիս փորձը, ընդ որում՝ նրանք կարող են լինել այլ բուհերի աշխատակիցներ: Եթե ռեկտորի ընտրության հարցը հանվի հոգաբարձուների խորհրդի գործառույթից, ապա կլինի խորհուրդ, որն իսկապես կգրադվի բուհի հարցերով: Ըստ նրա ճիշտ կլինի այն ձևակերպումը, որ Հոգաբարձուների խորհուրդը պահպանում է բոլոր լիազորությունները՝ բացի ռեկտոր ընտրելուց և հաստիքացուցակ հաստատելուց: Գիտական խորհրդի ուսանող անդամ Բ. Մաթևոսյանի դիտարկմամբ՝ վերահսկիչ փաթեթի մասով խնդիր է առաջանում բուհի ինքնավարության հետ և նախկին ժամանակներից բերվող օրինակները տեղին չեն, որովհետև տոտալիտար կառավարման համակարգում է եղել: Մշտապես խոսվել է բուհի ինքնավարության մասին, սակայն ներկայում 50 տոկոս վերահսկիչ փաթեթ է սահմանվում, մինչդեռ պետք է ազատականացման տրամաբանության ներքո լիներ: Նրա խոսքերով՝ հիմնադիր լինելը չի նշանակում, որ պետք է լինի լիարժեք վերահսկիչ փաթեթ, հիմնադիր լինելը պարտադիր կերպով չի ենթադրում կառավարում և պետք է հաշվի առնել, որ համալսարանը ինքնաֆինանսավորվում է և պետությունը միայն 20 տոկոսն է վճարում: Վերահսկիչ փաթեթի հարցը վտանագավոր է բուհի քաղաքականացման տեսանկյունից:

Որոշվեց ռեկտորի նշանակման հարցը ներկայացնել որպես առանձին կարծիք:

Հոդվածի վերաբերյալ ԵՊՀ գիտխորհրդի նիստի ժամանակ ծավալվեց քննարկում, որի ընթացքում գիտխորհրդի անդամները հայտնեցին իրենց մտահոգությունները, դիտարկումները և առաջարկները, որոնք ևս կներառվեն միասնական դիրքորոշման մեջ: Մասնավորապես՝ քննարկվեց բուհի գործունեության

ժամանակ հիմնադիր մարմնի ներգրավվածության հարցը, որը, ըստ Գ. Գևորգյանի, միանգամայն բնական է:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան Գագիկ Ղազինյանը օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացրեց ընդհանուր բնույթի դիտողություններ: Նա մասնավորապես ասաց, որ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագիծը, ինչպես օրենսդրական տեխնիկայի, այնպես էլ բովանդակային ասպեկտներով չի համապատասխանում սահմանադրությամբ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով ամրագրված բազում առանցքային նորմերին: Նրա խոսքերով՝ այն լրջագույն աղերսներ ունի նաև միջազգային իրավական չափանիշների, ինչպես նաև միջազգային փորձի հետ: Օրինագիծը, ըստ էության, որևէ էական նորամուծություն չի բովանդակում՝ մեկ-երկու բացառություններով՝ ընդունելության կարգ և կառավարման առաջարկվող մոդել: Այն դեռևս տարիներ առաջ մշակվել և դարձել է մասնագիտական շրջանակում քննարկման առարկա, որի արդյունքներով պարզ էր դարձել, որ այն ոչ միայն իրավաչափ լուծումներ չի առաջադրում, այլև գոնե մասնակիորեն չի վայելում մասնագետների հավանությունը:

Նա փոխանցմամբ, այդպիսի օրինակներից է օրինագծի 1-ին հոդվածի 3-րդ մասը, որը ոչ միայն չի համապատասխանում սահմանադրությամբ ամրագրված որոշակիության սկզբունքին (6-րդ հոդվածի 2-րդ մաս), այլև հակասում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի՝ իրավական կոլիզիաների դեպքերի համար սահմանված իրավակիրառման կանոններին (39-40-րդ հոդվածներ): Ըստ նրա՝ նույն հոդվածի 4-րդ մասը հավուր պատշաճի չի համապատասխանում սահմանադրությանը, բնորոշ է այն, որ նպատակների շարքում անգամ անտեսված է ակադեմիական ազատության երաշխավորման անհրաժեշտությունը: Փոխարենը՝ նախապատվությունը տրվել է հրապարակախոսական, մասամբ էլ՝ վերացական բնութագրիչներին՝ «ստեղծել արդյունավետ իրավական հենք», «բարձրացնել ուսումնական հաստատությունների հանրային պատասխանատվությունը» և այլն: Բացի դրանից՝ սահմանադրությամբ «անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացումը» ամրագրված է որպես պետության քաղաքականության հիմնական նպատակ, որի մասին օրինագծում ամրագրված նպատակների ցանկում անգամ ակնարկ չկա:

Գ. Ղազինյանի փոխանցմամբ՝ հայեցակարգային ասպեկտով օրինագծում առկա է մեծ շփոթ, մասնավորապես՝ հաշվի չեն առնվում արդեն իսկ ձևավորված կրթական համակարգում ռեկտորների և այլ ստորաբաժանումների ղեկավարների կարգավիճակն ու առաքելությունը, ինչի արդյունքում նրանք արհեստականորեն նույնացվում են, այսպես կոչված, մենեջերների հետ, որոնք արհեստավարժ կառավարիչներ են գուտ կառուցակարգային կառավարման և ֆինանսատնտեսական հատվածի կազմակերպման ոլորտներում: Գ. Ղազինյանը նկատեց, որ սրանք չափազանց կարևոր ոլորտներ են, սակայն գիտակրթական հաստատության առանցքը բացառապես կրթության և գիտության բարդ համակարգերի կառավարումն է, որոնք ընդհանուր աղերսներ չունեն գուտ կառուցակարգային և ֆինանսատնտեսական ոլորտների հետ: Փոխարենը՝ ռեկտորը պետք է ձեռքբազատվի ընթացիկ վարչարարությունից և զբաղվի հիմնականում կրթական

և գիտական ծրագրերի արդյունավետության բարելավմամբ: Օրինագծում այն անհիմն մեկնակետն է առաջադրվում, որ ռեկտորը և մյուս ստորաբաժանումների ղեկավարները պետք է շարունակեն զբաղվել ինչպես նշված հարցերով, այնպես էլ՝ տնտեսավարությամբ ու վարչարարությամբ, ինչի արդյունքում էլ հանգել են այն հետևության, որ հարկ է սահմանել տարիքային սահմանափակումներ, որոնք բնորոշ են այդ գործառույթների իրականացմանը: Ըստ նրա՝ սա պատահական չէ ամրագրված: Մինչդեռ հարկ է մտածել աշխատակազմի արդյունավետ կառավարման մասին, ոչ թե ռեկտորին ընկալել որպես աշխատակազմի ղեկավար: Ավելին՝ ռեկտորը նույնիսկ բուհի ակադեմիական (գիտական) խորհրդի նախագահ կարող է չլինել, այսինքն համարվում է զուտ որպես մենեջեր:

Նրա կարծիքով, սա խոսում է նաև երկակի ստանդարտների մասին, քանզի, օրինակ, հանրային ծառայության այն ներկայացուցիչներին, որոնք պատասխանատու են քաղաքականություն մշակելու համար, իսկ կրթական համակարգում հիշյալ ղեկավարները հենց քաղաքականություն մշակելու համար են կոչված, չի սահմանվում որևէ տարիքային սահմանափակում, մինչդեռ այդ քաղաքականությունն իրագործելու համար պատասխանատու հանրային ծառայողների համար սահմանվում են նշված սահմանափակումները: Հաջորդ հայեցակարգային խնդիրն, ըստ Գ. Ղազինյանի, այն է, որ ակնհայտ թերի է օրինագծի կարգավորման առարկայի շրջանակը, ներկայացված տեսքով այն պարզապես ունակ չէ ապահովելու իրավական կարգավորման համալիր ու ամբողջական որակները: Օրինագծի ողջ տեքստը միտված է գիտակրթական հաստատությունների իրավական կարգավիճակին, գործառույթներին և խնդիրներին, սակայն որևէ անդրադարձ չկա այն հարցադրումներին, թե թվարկված խնդիրներն ինչպես են իրագործվելու, ինչ կոնկրետ պարտավորություններ են սահմանվելու հանրային իշխանության մարմինների համար: Առանցքային խնդիր է այն, որ չի կարող ստեղծվել նորմալ օրենք, եթե չկա դրա հայեցակարգը:

Նա փաստեց, որ օրենքի նախագծի վերտառությունը, ինչպես նաև նախագծի կարգավորման առարկան ցույց են տալիս, որ մեկ իրավական ակտի շրջանակում փորձ է արվել միավորել բարձրագույն կրթության և գիտության ոլորտները: Ներկայումս բարձրագույն կրթության և գիտության ոլորտները ունեն փոխկապակցվածության բարձր մակարդակ, սակայն, միևնույն ժամանակ, առանձին զարգացող և ինքնուրույն գործառող ոլորտներ են, որի արդյունքում դրանց միավորումը մեկ օրենքում արդարացված չէ: Գ. Ղազինյանի փոխանցմամբ, նախագծի ընդունման անհրաժեշտության հիմնավորման բացակայությունը հնարավորություն չի տալիս վերջնականորեն ընկալելու նախագծի հեղինակների կողմից որդեգրված մոդելի հիմքում դրված տրամաբանությունը. ուստի նախագծում բացակայում է դրա հստակ ամրագրված նպատակը, նախագիծը կաղում է նաև համակարգվածության տեսանկյունից, այն ավելի շատ առանձին իրավակարգավորումների արհեստական համակցություն է, քան համակարգված և որոշակի տրամաբանությամբ կառուցված փաստաթուղթ: Նախագծի բովանդակության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոլորտների միավորումը կրում է արհեստական բնույթ, քանի որ նախագծի առավել մեծ մասը նվիրված է բարձրագույն կրթության

հատվածին, իսկ գիտության մասով, ըստ էության, կարգավորումները բավականին քիչ են և թերի:

Օրինագծի լրջագույն թերություններից է սահմանադրությամբ ամրագրված լիազորող նորմերի որոշակիության սկզբունքից ակնհայտ շեղման բազում դեպքերի առկայությունը: Հատկապես բնորոշ է այն, որ օրինագծում մեծ քանակ են կազմում այն նորմերը, որոնցում օգտագործված են «համապատասխան մարմիններ և կազմակերպություններ», «համապատասխան նորմատիվ իրավական ակտերը» և այլ նմանաբնույթ արտահայտությունները. բացի դրանից, նախագծում առկա է տերմինաբանական շփոթ՝ կապված գիտական աշխատող, ակադեմիական կազմ, դասախոս հասկացությունների իմաստի և դրանց կիրառման հետ:

Նախագծի համաձայն՝ գիտական աշխատող է համարվում բուհում կամ գիտական կազմակերպությունում գիտահետազոտական աշխատանք իրականացնող և գիտական արդյունք ստեղծող անձը. «Նախ պետք է նշել, որ գիտահետազոտական աշխատանք եզրույթը նախագծում մեկնաբանված չէ, նախագիծն օգտագործում է նաև «գիտահետազոտական գործունեություն» եզրույթը և տալիս է դրա սահմանումը, սակայն պարզ չէ, թե արդյոք գիտահետազոտական աշխատանք և գիտահետազոտական գործունեություն եզրույթները նույնանում են»: Բացի այդ՝ «գիտական աշխատող» հասկացության սահմանումից ստացվում է, որ բուհում գիտահետազոտական աշխատանք կատարող և գիտական արդյունք ստեղծող ցանկացած անձ կհամարվի գիտաշխատող: Բայց չէ՞ որ ակադեմիական պաշտոն զբաղեցնող անձը ևս կարող է զբաղվել գիտահետազոտական գործունեությամբ և դրա արդյունքում չի կարող համարվել գիտական աշխատող: Նախագծի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գիտական աշխատողը միանշանակորեն չի մտնում ակադեմիական կազմի մեջ: Նախագիծն օգտագործում է նաև դասավանդող կազմ եզրույթը, սակայն չի տալիս դրա սահմանումը. արդյո՞ք այն նույնանում է ակադեմիական կազմի հետ, թե դրա մաս է կազմում:

Նրա դիտարկմամբ՝ նախագծի 5-րդ հոդվածը չունի նորմատիվային կարգավորում, անհասկանալի է դրա նորմատիվային բեռը, այն ավելի շատ նախագծի՝ այս տեսքով ընդունման հիմնավորում է, հիշեցնում է նախընտրական ծրագրային փաստաթուղթ: Այն արմատապես հարկ է վերանայել և փորձել հստակ սահմանել այն իրավական հիմքերը, որոնք պետք է կարգավորեն բարձրագույն կրթության և գիտության ոլորտում ինտեգրման պետական քաղաքականությանն առնչվող հարաբերությունները: Ընդհանրապես, նախագիծը խիստ ծանրաբեռնված է տարաբնույթ նպատակներով և խնդիրներով, որոնք չունեն նորմատիվային հիմք և ծանրաբեռնում են նախագիծը: Ավելին, եթե սահմանվում են այսքան շատ նպատակներ, խնդիրներ և գործառույթներ, ապա անհրաժեշտ է ապահովել «նպատակ-խնդիր-գործառույթ-լիազորություն» միասնական շղթայի տրամաբանական հաջորդականությունը: Այսինքն՝ որքանով են դրված խնդիրները օգնում հասնելու սահմանված նպատակներին և այլն:

Գ. Ղազինյանի պնդմամբ՝ նախագծում նշված սկզբունքը չի պահպանվել, ավելին՝ նպատակներն ու խնդիրները շատ դեպքերում միահյուսված են, իսկ որոշ դեպքերում

խնդիրները չեն համապատասխանում հետապնդվող նպատակներին, իսկ նպատակները՝ սկզբունքներին:

Նրա դիտարկմամբ՝ բավական մտահոգիչ է օրինագծով առաջարկվող հանրային բուհի կառավարման մոդելը, քանի որ այն տանում է ոչ թե ակադեմիական ազատություններից բխող ինքնավարության ու ինքնակառավարման, այլ գործադիր բյուրոկրատական կառավարման մարմիններից կախվածության ու կենտրոնացման, ինչը հղի է լրջագույն վտանգներով: Առաջարկվող մոդելը ուղղահայաց կառավարման համակարգ է, որը, փաստացի, հնարավորություն է տալիս լիազոր մարմնին նշանակելու ընդհուպ դեկաններին: Օրինագծով առաջարկվում է հանրային բուհի կառավարման խորհրդի այնպիսի կազմ, որում առնվազն 6-ը, այսինքն՝ ուղիղ կեսը պետք է լինեն համապատասխան նախարարի ներկայացուցիչներ: Մա համահունչ չէ միջազգային փորձին, մասնավորապես պետական բուհերում երբեք կառավարության ներկայացուցիչները չեն կազմում խորհրդի կեսը, պարզապես ապահովվում է որոշակի խելամիտ ներգրավվածություն՝ կառավարության քաղաքականությունը ներկայացնելու և վերահսկողություն ապահովելու նկատառումով: Առավել ևս բացառվում է, որ այդ անդամներից որևէ մեկը լինի խորհրդի նախագահ:

Վերջինիս փոխանցմամբ՝ նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային բուհի կառավարման խորհուրդը գործում է 5 տարի ժամկետով, որի կազմը հաստատում է համապատասխան լիազոր մարմինը: Լիազոր մարմինը և՛ նշանակում է խորհրդի անդամների կեսին, և՛ հաստատում է կազմը: Նախկինում, ինչպես հիշում եք, համալսարանի կառավարման խորհուրդը կազմված էր 72 (ի տարբերություն մնացած բուհերի) անդամներից, որոնք համամասնաբար ընտրվում էին Կառավարության, լիազոր մարմնի, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության կողմից: Հետագայում՝ հիմնադրամ դառնալուց հետո, կազմը դարձավ 32՝ նույն համամասնությամբ, այսօր արդեն 12, և այստեղ բացակայում է կառավարության մասնակցությունը: «Նշված կարգավորումը նախատեսում է պետական միջամտություն բուհի ինքնավարության մաս կազմող ինքնակառավարման գործառույթի իրացմանը: Միաժամանակ, նախագիծը չի կարգավորում այն հարցը, թե արդյոք լիազոր մարմինը կարող է չհաստատել բուհի կառավարման խորհրդի կազմը, թե հաստատելը նրա պարտականությունն է», - ասաց Գ. Ղազինյանը:

Նա անդրադարձավ 30-րդ հոդվածի 7-րդ կետում ռեկտորի վետոյի իրավունքի մասին դրույթին, որով սահմանվում է, որ ակադեմիական խորհրդի որոշման վրա բուհի ռեկտորն ունի արգելք դնելու իրավունք, եթե այն հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և բուհի կանոնադրությանը: Մեկամսյա ժամկետում նույն որոշումն ակադեմիական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընդունվելու դեպքում, այն համարվում է ակադեմիական խորհրդի կողմից ընդունված և պարտադիր բուհի ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների համար: Ստացվում է, որ նախ ռեկտորը կարող է վերահսկել ակադեմիական խորհրդի որոշումները և երկրորդ՝ օրենսդրությանը հակասող որոշումները կարող են այնուամենայնիվ լինել կիրառման համար պարտադիր: Այս

նորմը անհրաժեշտ է վերախմբագրել այնպես, որ ռեկտորը չունենա նման լիազորություն, սակայն հնարավորություն ունենա բողոքարկելու թե ակադեմիական խորհրդի և թե կառավարման խորհրդի որոշումները դատական կարգով:

Բացի դրանից, ըստ նրա, էականորեն նվազեցվել է կառավարման խորհրդի անդամների թիվը՝ ընդամենը տասներկու հոգի: Ընդ որում՝ խորհրդի անդամների կեսին նշանակում է լիազոր մարմինը, ինչը ևս ուղղակի միջամտություն է բուհական ինքնավարությանը: Մասնավորապես՝ նախագիծը չի կարգավորում խորհրդում որոշումների ընդունման կարգը, ինչը ենթադրում է, որ դա թողնված է բուհի կանոնադրությանը, որի արդյունքում, եթե բուհի կանոնադրությամբ չնախատեսվեն որոշումների ընդունման այնպիսի մեխանիզմներ, որոնք կբացառեն անդամների կեսի քվեարկելու դեպքում որոշումների ընդունումը, ապա ստացվում է, որ լիազոր մարմինը էականորեն ազդելու է որոշումների ընդունման գործընթացի վրա:

ԻԿՄ ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանը հարցադրում բարձրացրեց, թե արդյո՞ք նախագծով ենթադրվում է ուսանողական մեկ, թե՞ մի քանի խորհուրդների գոյություն, ինչին ի պատասխան Գ. Ղազինյանը նշեց, որ այդ հարցն իրավական տեսանկյունից կամարտահայտման սկզբունքի մեջ է, նախագծի տրամաբանությունը հուշում է մեկից ավելի խորհուրդների ստեղծման հնարավորություն, սակայն պետք է առաջնորդվել առկա ավանդույթներով, համալսարանը որպես միասնական օրգանիզմ պետք է ունենա իւելամիտ չափով ուսանողական կառույցներ: Գիտխորհրդի ուսանող անդամներից մեկը հարցի առնչությամբ նկատեց, որ որպես ներկայացուցչական մարմին համալսարանում պետք է լինի մեկ միասնական ուսանողական խորհուրդ:

Գիտխորհրդի անդամ Դ. Մաթևոսյանը նկատեց, որ կառավարման խորհրդի հարցով քվեարկություն չի կատարվել և հարցն առկախվում է պահի դրությամբ քվորում չլինելու պատճառով, ինչին ի պատասխան Գ. Գևորգյանը նշեց, որ այն կներկայացվի իր և Գ. Ղազինյանի կողմից՝ որպես առանձին կարծիք: Անդրադառնալով կառավարության վերահսկիչ փաթեթի խնդրի վերաբերյալ հարցին և օրենքի նախագծին հայեցակարգային առումով դեմ լինելու նկատառմանը՝ Գ. Ղազինյանը նկատեց, որ նախագծի հետ կապված դրական մտտեցում չունի և կարելի է ընդհանրական քննարկմանը նման եզրակացություն տալ, ինչը ընդունելի համարվեց գիտխորհրդի անդամների կողմից: Ինչ վերաբերում է կառավարման խորհրդին՝ նա նկատեց, որ օբյեկտիվորեն մեզ մոտ ընտրություններ չեն կայանում, այլ դրանք ըստ էության ռեկտորի նշանակումներ են: Համոզմունք հայտնեց նաև, որ վերահսկիչ փաթեթը պետք է պատկանի համալսարանի ներկայացուցիչներին, քանի որ այն առևտրային կազմակերպություն չէ, համալսարանին պետք է հարգեն և նրա խոսքը պետք է ունենա արժեք: Հարցի առնչությամբ Գ. Գևորգյանը նշեց, որ հոգաբարձուների անդամների թիվը էական չէ, և համալսարանի խնդիրներով լրջորեն զբաղվելու համար հոգաբարձուների խորհրդի անդամները պետք է թվով քիչ լինեն և վարձատրվեն: Գիտխորհրդի անդամները նկատեցին, որ նախագծում հստակորեն ամրագրված չէ Համալսարանի կազմակերպատիրավական կարգավիճակը, այդ հարցում առկա է անորոշություն:

Օրենքի նախագծի քննարկման ընթացքում մասնակիցների ուշադրության առանցքում էր նաև 36-րդ հոդվածի 6-րդ կետը, որը սահմանում է՝ ՀՀ կառավարությունն իր կողմից տրամադրվող ուսանողական կրթաթոշակները բուհին է հատկացնում յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով նախատեսված միջոցների սահմաններում, ըստ բուհերի և կրթական ծրագրերի: Ուսանողական կրթաթոշակ ստացած ուսանողը այն ստանում է տվյալ մակարդակում կրթության ամբողջ ժամանակահատվածի համար և կարող է դրանից զրկվել չորս կիսամյակ (բարձրագույն կրթության երկրորդ և երրորդ մակարդակների դեպքում՝ երկու կիսամյակ) անընդմեջ տվյալ կրթական ծրագրի համար բուհի կողմից սահմանված միջին որակական գնահատականի 20 տոկոսից պակաս ունենալու դեպքում: Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Արթուր Սահակյանը նկատեց, որ այդ դրույթը նշանակում է, որ վերանում է ռոտացիոն մեխանիզմը: Որոշվեց այս դրույթի վերաբերյալ նկատառումը ևս ներառել ԵՊՀ գիտխորհրդի ընդհանրական կարծիքի մեջ: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը օրենքի նախագծի վերաբերյալ գիտական խորհրդի ընդհանուր մոտեցումը գնահատեց որպես բացասական՝ նիստը համարելով փակված:

Գիտական խորհրդի նախագահ՝

Գ. Գ. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ. Ս. Հովսեփյան

07.10.2019թ.